# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2024թ. հուլիսի 8 -ին, N 239 -Ա

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐՏԵՆԻԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՄԱՐԻՆԵ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 61-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արտենիի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Մարինե Դարբինյանի 2024 թվականի հուլիսի 4-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արտենիի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Մարինե Դարբինյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի հուլիսի 9-ից օգոստոսի 12-ը ներառյալ:
2. Մարինե Դարբինյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արտենիի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Արտենիի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գրադարանավար Սվետլանա Պողոսյանին:
3. Մարինե Դարբինյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 13-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 08.07.2024 17:29:05 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ / STAFF OF ARAGATSOTN MARZPET OF THE REPUBLIC OF ARMENIA / АППАРАТ МАРЗПЕТА АРАГАЦОТНА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ